



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«30» 12 2016թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 111

Ձեռնարկողը՝

<<Մառա և դուստրեր>> ՍՊԸ

Ք. Երևան, Փ.Բուզանդի փող. 17, բն.2

Գործունեությունը՝

**Կապանի թիվ 7 դպրոցի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

ՀՀ Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Գ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 111

«30» 12 2016թ.

**«Մառա և դուստրեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի
Կապանի թիվ 7 դպրոցի կառուցման նախնական գնահատման հայտ**

Պատվիրատու՝

«Մառան և դուստրեր» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր

Տեղադրման վայրը՝

ՀՀ Սյունիքի մարզ

Գործունեության կատեգորիան՝ «Գ»

Կապանի թիվ 7 դպրոցի կառուցումն իրականացվելու է Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում (ԴՍԱԲՕ) Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ արդյունքների վրա հիմնված վարկավորման (ԱՀՎ) մոդելի կիրառմամբ:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության <<Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության>> նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը, և երկրի կայուն զարգացմանը:

Կապանի թիվ 7 դպրոցի կառուցումը նախատեսված է իրականացնել Կապան քաղաքի Շահումյան 16 հասցեում գտնվող նույն Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի տարածքում: Կապանի թիվ 7 դպրոցի մասնաշենքերի քանդման աշխատանքներն իրականացված են ՀՀ կառավարության 25.08.2016թ թիվ 862-Ա որոշման համաձայն:

Դպրոցը նախատեսված է հիմնական /1-9 դասարանների համար/ 600 աշակերտների համար: Դպրոցի համալիրը բաղկացած է երեք մասնաշենքերից՝ հիմնական ուսումնական մասնաշենքը, մարզադահլիճ և հանդիսությունների դահլիճ, որոնք անջատված են միմյանցից հակասեյսմիկ կարաններով:

Դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 2615քմ, իսկ ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 10020քմ: Համաձայն նախնական գնահատման հայտի դպրոցը բաղկացած է լինելու սեյսմիկ կոնստրուկտիվ կարերով միացված 4 մասնաշենքերից, որոնցից յուրաքանչյուրը կունենա 793.5քմ, 1160.3քմ, 284.5քմ և 376.7քմ մակերեսներ: Ուսումնական մասնաշենքում նախատեսվում է կառուցել թվով 25 դասասենյակ, աշխատասենյակներ և լաբորատոր սենյակներ, ինչպես նաև ճաշասենյակ և հանդիսության սրահներ: Դպրոցի համալիրը կունենա 1 սպորտային գոտի՝ 660քմ, մակերեսով, ինչպես նաև նախատեսվում է կառուցել կաթսայատուն, որը կզբաղեցնի 37քմ ընդհանուր մակերես:



Ուսումնական մասնաշենքը բաղկացած կլինեն երկու եռահարկ մասնաշենքերից, որոնք անջատված են միմյանցից հակասեյսմիկ կարանով:

Առաջին հարկը կունենա՝ 3.6մ, իսկ երկրորդ և երրորդ հարկերը 3.3մ բարձրություն:

Առաջին հարկում տեղադրված են ճաշարանը, հանդերձարանները, տնօրենի աշխատասենյակը, արհեստագործական և խոհարարական սենյակները, գրադարանը, պարարվեստի սենյակը և այլն: Երկրորդ և երրորդ հարկերում հիմնականում ուսումնական դասարաններ են: Բոլոր դասարաններն ապահովված են բնական օդափոխությամբ: Ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության դասասենյակները և լաբորատորիաները, ճաշարանը ունեն նաև արհեստական օդափոխություն: Մասնաշենքը ունի երկու հիմնական հակահրդեհային աստիճանավանդակ էվակուացիոն ելքերով, և մեկ լրացուցիչ եռաբազուկ աստիճանավանդակ, որի կողքին նախատեսվում է տեղադրել վերելակ: Բոլոր հարկերում նախատեսված են սանհանգույցներ տղաների, աղջիկների, հաշվանդամների և անձնակազմի համար:

Հանդիսությունների /15X18/ և մարզադահլիճային /15X24/ մասնաշենքերը միահարկ են, կունենան համապատասխանաբար 4.0 և 6.0մ բարձրություն, ծածկվելու են մետաղական ֆերմաներով: Դահլիճները ապահովվելու են անհրաժեշտ օժանդակ սենքերով և հանդերձարաններով: Մասնաշենքերի տանիքները լանջավոր են՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Հիմնական մասնաշենքն իրականացվելու է փայտե կրող կոնստրուկցիաներով, տանիքածածկը իրականացվելու է գունավոր ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից, իսկ հանդիսությունների եվ մարզադահլիճի մասնաշենքը ծածկվելու է <<սենդվիչ>> պանելներով (120մմ հաստությամբ):

Մասնաշենքերի արտաքին հարդարումը՝ որմնախարիսխը երեսապատվելու է բազալտե սալերով, պատերը ջերմամեկուսացվելու, սվաղվելու և ներկվելու են ֆասադային որակյալ գունավոր ներկերով: Որոշ հատվածներ երեսապատվելու են գունավոր ալիկաբոնդով: Ներքին հարդարումը իրականացվելու է բարձրորակ նյութերով: Բոլոր ելքերի մոտ տեղադրված են հովարներ:

Աստիճանների եվ որոշ պատուհանների առջև տեղադրվելու է այլումինե ճաղաշար:

Տարածքի կանաչապատման և ասֆալտապատման գոտիների մակերեսները համապատասխանաբար կկազմեն 1670քմ և 4099քմ:

Մասնաշենքերի տանիքը նախատեսվում է կառուցել լանջավոր՝ փայտյա ծպեղային համակարգով, որը կունենա նաև կազմակերպված արտաքին ջրահեռացում:

Դպրոցի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Շահումյան փողոցով անցնող 160մմ տրամագծով և Երկաթուղային փողոցով անցնող 150մմ տրամագիծ ունեցող քաղաքային ջրագծերից: Ջրահեռացումն իրականացվելու է 200մմ տրամագծով մոտ 50մ ընդհանուր երկարությամբ խողովակով, որը կմիացվի Շահումյան փողոցով անցնող 400մմ տրամագիծ ունեցող քաղաքային կոյուղագծին: Նախագիծը համաձայնեցվել է Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ի կողմից 09.09.2016 տրված տեխնիկական պայմանների:

Դպրոցի ջեռուցումը նախատեսվում է իրականացնել կաթսայատան միջոցով: Նախագծվող կաթսայատունը նախատեսված է հետևյալ բնութագրերով՝ առանցքային չափերը կլինեն 5000 x 7400մմ, որը նախատեսվում է կառուցել քարե պատերով, փայտյա ծպեղային տանիքով և պրոֆիլային թիթեղով: Կաթսայատան շահագործումը կիրականացվի ջրային երկու կաթսաների միջոցով բնական գազի այրմամբ՝ 198000 կկալ/մ3 ջերմությամբ: Բնական գազի վառելիքի առավելագույն ծախսը գնահատվում է յուրաքանչյուր կաթսայի համար՝ 29.0մ3/ժ:

Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխազագերի հեռացումը կկատարվի 350մմ տրամագծով և 14մ բարձրությամբ ծխնելույզի միջոցով:



Կաթսայատան ջուրն օգտագործվելու է միայն ջրաջեռուցիչ կաթսայի և ջերմային ցանցերի միանվագ լցման համար, որը հետագայում կլրասնուցվի համակարգում ջրային կորուստների առաջացման դեպքում: Արտադրական հոսքաջրերի առաջացումը բացառվում է, քանի որ կաթսայատանը ջրապատրաստման գործընթաց չի նախատեսվում իրականացնել: Համաձայն արտանետումների հաշվարկման արդյունքների կաթսայատան շահագործման ընթացքում մթնոլորտային օդ արտանետված վնասակար գազերի գետնամերձ քանակները գտնվում են սահմանված թույլատրելի նորմերի սահմաններում:

Դպրոցի ներքին ջեռուցման համակարգը գործելու է ջրային ջեռուցման միջոցով: Մասնաշենքերում նախատեսված է արհեստական շրջանառությամբ, երկխողովականի հորիզոնական մատակարարումով ջերմատարի փակուղային շարժումով ջեռուցման համակարգեր: Ջերմատարը յուրաքանչյուր հարկում՝ հատակի վրայով անցնող մատակարարող խողովակներով բաշխվելու է ջեռուցման մարտկոցներին առանձին-առանձին:

Դպրոցում նախատեսված են ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր, ինչպես արհեստական եղանակով այնպես և բնական ճանապարհով: Մեխանիկական ներծծման և արտածման օդափոխությունը նախատեսված է միջանցքների, բուֆետի, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճների համար: Մեխանիկական արտածում է նախատեսված նաև քիմիայի և ֆիզիկայի դասասենյակի քարշիչ պահարանի համար: Բնական արտածումը նախատեսված է իրականացնել դասարանների և աշխատասենյակների համար:

Դպրոցի հանդիսությունների դահլիճի, մարզադահլիճի, պարասրահի, արհեստանոցների և բուֆետի համար նախատեսված են մեխանիկական դրդմամբ օդափոխության ներածման և արտածման համակարգեր: Օդափոխության համար կօգտագործվեն "REMAK" ֆիրմայի կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել համարժեք պարամետրերով այլ համակարգով: Դահլիճների օդափոխության համակարգերի սարքավորումները կտեղադրվեն ձեղնահարկում, իսկ բուֆետի, խոհանոցի և արհեստանոցների օդափոխության համակարգերը առաջին հարկի առաստաղի տակ:

Մնացած դասասենյակներում իրականացվելու է բնական արտածում: Բնական արտածման օդատարերը բարձրանալու են ձեղնահարկում 1մ և ծածկվելու են մետաղական ցանցով: Սանհանգույցների օդատարերը հորաններով բարձրանալու են տանիքից 1մ վերև: Օդի ներածումը և արտածումը կատարվելու է կարգավորիչ ճաղավանդակների միջոցով: Օդափոխության համար նախատեսվում է օգտագործել ցինկապատ օդատարեր: Օդափոխության համակարգերի բոլոր օդատարերը տանիքից դուրս ջերմամեկուսացվում են ֆոլգապատ ապակեբամբակով: Նախագծված օդափոխության սխեման թույլ է տալիս տնտեսել ջերմության ծախսը:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել հետևյալ ծավալներով հողային աշխատանքները դպրոցի շենքի փոստրակի մշակում՝ կաթսայատան շենքի խրամուղու մշակում՝ ընդհանուր հանույթի տեղափոխումով՝ 3794.16մ³, ետլիցքի համար բերվող գրունտ 998.74մ³:

Բուսահողը նախատեսվում է տեղափոխել և պահել մոտ 7կմ հեռավորության վրա Վանաձորի քաղաքապետարանի կողմից նախատեսված տարածքում, իսկ ետլիցքի համար նախատեսված հանույթը նախատեսվում է թափոնակույտեր շինարարական և հետագայում օգտագործել բարեկարգման և հողային աշխատանքներում:

Պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը կիրականացվի 0,4կՎտ օդային մալուխային գծից:



Շինմեխանիզմների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական հիմնարկի պահեստից, իսկ խտացրած օդը նախատեսվում է մատակարարել շարժական կայաններից (ԶԻՖ-55 մակնիշի): Շինարարական հրապարակը ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը, շարժական տնակը և այլն կազմակերպվելու է բացառապես դպրոցի վարչական տարածքի սահմաններում: Տարածքը ցանկապատվելու է, կիրառվելու է ցանկապատ: Դպրոցի տարածքում առկա է 1425քմ կանաչապատ մակերես, որը ներկայացված է լայնատերևավոր սաղարթավոր և ասեղնատերևավոր ծառատեսակների ծառուղիներով և գեղազարդ խմբերով: Դպրոցի տարածքում գտնվում է տարբեր տարիքի շուրջ 60 ծառ:

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունը ներկայացվում է երկու շինարարության և շահագործման փուլերով:

Շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքում գոյություն ունեցող ջրագծից: Շինարարական աշխատանքների ընթացքում ծառերի հատում չի նախատեսվում:

Հետշինարարական փուլում հնարավոր բնապահպանական ազդեցությունները կարող են առաջանալ ջեռուցման շրջանում կաթսայատան շահագործման ընթացքում, սակայն համաձայն արտանետվող վտանգավոր նյութերի քանակների հաշվարկի, վնասակար նյութերի քանակները սահմանային թույլատրելի նորմերի սահմաններում են:

Եզրահանգում

Ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսված աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցմանն ուղղված բավարար միջոցառումներ՝ մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վերաբերյալ:

Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ:

Այսպիսով իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջ

- Շինարարության ընթացքում առաջացած շինադրք, կենցաղային աղբը, անհրաժեշտ է հեռացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մառան և դուստրեր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Կապանի թիվ 7 դպրոցի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Զ. Զուռնայան